ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1642 - Ա **26 մարտի 2009թ.**

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՓՈՂՈՑԻ Հ.3/23 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԶԱՏ ԽԱՉԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ, ՎԱՐԴԱՆ ԱԶԱՏԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ, ՊԱՅԾԱՌ ԱԶԱՏԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ, ԳՈՀԱՐ ԱԶԱՏԻ ՂԵՎՈՆԴՅԱՆԻ, ՕԼՅԱ ԱԶԱՏԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ազատ Խաչիկի Ղազարյանի (ծնված 23.09.1951թ.), Վարդան Ազատի Ղազարյանի (ծնված 21.11.1975թ.), Պայծառ Ազատի Ղազարյանի (ծնված 17.04.1981թ.), Գոհար Ազատի Ղևոնդյանի (ծնված 03.03.1977թ.), Օլյա Ազատի Մելքոնյանի (ծնված 27.09.1952թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Սեբաստիայի փողոցի հ.3/23 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 109.54քմ, որից 85.4քմ մակերեսով հողամասն Ազատ Խաչիկի Ղազարյանին, Վարդան Ազատի Ղազարյանին, Պայծառ Ազատի Ղազարյանին, Գոհար Ազատի Ղևոնդյանին, Օլյա Ազատի Մելքոնյանին Երևանի քաղաքապետի 1999 թվականի փետրվարի 15-ի հ.136 որոշմամբ տնօրինմանը և օգտագործմանը թողնված հողամասն է: Բնակելի տան զբաղեցրած հողամասին կից օգտագործվող 24.14քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1970 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 20.10.2008թ. հ.96, Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 18.03.2009թ. հ.20/2-Ե/122 գրությունները, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 06.03.2009թ. հ.20-Ել-1582 եզրակացությունը, համաձայն որի Սեբաստիայի փողոցի հ.3/23 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Սեբաստիայի փողոցի հ.3/23 հասցեում Ազատ Խաչիկի Ղազարյանին, Վարդան Ազատի Ղազարյանին, Պայծառ Ազատի Ղազարյանին, Գոհար Ազատի Ղևոնդյանին,

Օլյա Ազատի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողհատկացման հիմքերը 85.4քմ մակերեսով հողամասի չափով, բնակելի տանը կից հողամասի հողօգտագործման իրավունքը 24.14քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 109.54քմ մակերեսով հողամասի և 24.14քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Սեբաստիայի փողոցի 3բ հ.38 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Սեբաստիայի փողոցի հ.3/23 տուն»։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Ազատ Խաչիկի Ղազարյանի, Վարդան Ազատի Ղազարյանի, Պայծառ Ազատի Ղազարյանի, Գոհար Ազատի Ղևոնդյանի, Օլյա Ազատի Մելքոնյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա-Սեբաստիա թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**